ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«30» դեկտեմբերի 2016 թվականի № 120-Ա

<<ԱՆԱԼԻՏԻԿ>> ՓԲԸ-Ի 01.04.2015-31.12.2015ԹԹ. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով, հիմք ընդունելով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի և ներքին աուդիտի ռիսկերի որոշման չափորոշիչները հաստատելու մասին» 02.08.2012թ. N 61-Ա և «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 22.12.2015 թ. N 571-Ա հրամանները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնակատար Վահան Մարգարյանին, գլխավոր մասնագետներ Աննա Հակոբյանին և Հեղինե Կարապետյանին՝ սույն թվականի դեկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 10-ը իրականացնել «Անալիտիկ» ՓԲԸ-ի 01.04.2015 - 31.12.2015թթ. գնումների համապատասխանության աուդիտ:

2. Աուդիտի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, աուդիտի արդյունքները ներկայացնել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ